

Կանաչ կլիմայի հիմնադրամ (GCF) Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագիր (GEFF) – GEFF Հայաստան II - ԻՆԵՎՈՒՍԿ

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը	52440
Բիզնես ոլորտ	Բանկային
Պետական/մասնավոր	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	Ֆինանսական հաստատություն (\$Հ)
Հաստատման ամսաթիվը	2020թ. -ի դեկտեմբերի 22
Կարգավիճակ	Հաստատված
Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման ամսաթիվը	2020թ. -ի դեկտեմբերի 22

Ծրագրի նկարագրություն

ԻՆԵՎՈՒՍԿԻՆ տրամադրվում է մինչև 6 միլիոն ԱՄՆ դոլար գումարի չափով առաջնային վարկ, որից մինչև 4.5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը կտրամադրի ՎԶԵԲ-ը, իսկ մինչև 1,5 միլիոն ԱՄՆ դոլարի չափով գումարը՝ Կանաչ կլիմայի հիմնադրամը, GCF- GEFF Կանաչ տնտեսության ֆինանսավորման տարածաշրջանային ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակները

Վարկի միջոցները կօգտագործվեն տեղական մասնավոր հատվածի առևտրային հաճախորդների կողմից կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության տեխնոլոգիաներում ներդրումների ֆինանսավորման համար, Հայաստանում GEFF-ի ստանդարտներին և հաշվետվության պահանջներին համապատասխան: Վարկի միջոցների 100 տոկոսը կապված է դեպի Կանաչ տնտեսություն անցում կատարելու ներդրումների հետ:

Ան ցումային ազդեցությունը

Ծրագիրը սատարում է դեպի Կանաչ տնտեսություն անցման բարձր որակին՝ տրամադրելով ֆինանսավորում և նոու-հաու ֆինանսական միջնորդներին, որոնք, իրենց հերթին, ֆինանսավորում են կլիմայի փոփոխության արդյունավետ մեղմացման և հարմարվողականության տեխնոլոգիաներում ու լուծումներում մասնավոր հատվածի ներդրումները: Սա կնպաստի Հայաստանի անցմանը դեպի էկոլոգիապես կայուն, ցածր ածխածնային և կլիմայի փոփոխության հանդեպ դիմացկուն տնտեսություն:

Հաճախորդը

ԻՆԵՎՈԲԱՆԿ ՓԲԸ

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն ՎԶԵԲ-ի երկարաժամկետ գործընկեր բանկն է: ԻՆԵՎՈԲԱՆԿԸ Հայաստանի 5-րդ խոշորագույն բանկն է ընդհանուր ակտիվների թվով՝ 2020թ.-ի երրորդ եռամսյակի վերջի դրությամբ շուկայի մասնաբաժինը կազմել է 6.1%:

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

4,500,000.00 ԱՄՆ դոլար:

Ծրագրի ընդհանուր գումարը

6,000,000.00 ԱՄՆ դոլար:

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է FI կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն՝ ESP 2019): ԻՆԵՎՈԲԱՆԿԸ ՎԶԵԲ-ի ներկայիս հաճախորդն է և ընդունել է Բնապահպանական քաղաքականությունը և Բնապահպանական ու սոցիալական ընթացակարգերը, որոնք հիմնականում բավարարում են Գործունեության 2-րդ, 4-րդ և 9-րդ պահանջները (PR 2, 4, 9): ԻՆԵՎՈԲԱՆԿԸ պետք է ապահովի շարունակական համապատասխանություն Գործունեության պահանջներ 2, 4 և 9-ին, ինչպես նաև ՎԶԵԲ-ին ներկայացնի Բնապահպանական և սոցիալական տարեկան հաշվետվություններ՝ Ֆինանսական հաստատությունների կայունության ինդեքսի միջոցով, ներառյալ ենթածրագրերի և կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության առումով դրանց առավելությունների մասին հաշվետվություններ: Հայաստանում Կանաչ տնտեսության ֆինանսավորման ծրագրի (GEFF) միջոցով ֆինանսավորվող շահառուներից պահանջվում է հետևել շրջակա միջավայրի, առողջապահության, անվտանգության և աշխատանքային ստանդարտների ազգային պահանջներին, ինչպես նաև համապատասխանել կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության ծրագրերի Բնապահպանական և սոցիալական չափանիշներին՝ համաձայն Քաղաքականության մասին հայտարարությանը:

Տեխնիկական աջակցություն

Գործառնության համար կտրամադրվի մինչև 2.4 մլն եվրո գումարի չափով տեխնիկական աջակցություն, որը ֆինանսավորվում է Կանաչ կլիմայի հիմնադրամի (GCF) և ՎԶԵԲ-ի բաժնետերերի հատուկ հիմնադրամի կողմից: Տեխնիկական համագործակցության նպատակն է աջակցել Հայաստանում ֆինանսական միջտորդներին, այդ թվում՝ ԻՆԵՎՈԲԱՆԿԻՆ, կարողությունների զարգացման (հաշվի առնելով գենդերային ասպեկտները), մարկետինգի, նախագծերի գնահատման և ընդհանուր մոնիտորինգի ու հաշվետվությունների պատրաստման գործում: Բացի այդ, ԻՆԵՎՈԲԱՆԿԻ հաճախորդների ներդրումների խրախուսանքները, որոնք տրամադրվել են SREP (Ցածր եկամուտ ունեցող երկրներում վերականգնվող էներգետիկայի ընդլայնման) ծրագրի կողմից մինչև 793.000 ԱՄՆ դոլար գումարի չափով, կուղղվեն դրական արտաքին ազդեցություն ունեցող՝ կլիմայի փոփոխության մեղմացման և հարմարվողականության ծրագրերի խթանմանը և վաղ շրջանում որդեգրողների խրախուսմանը՝ նորարարական տեխնոլոգիաներ ներդնելու և կրիտիկական զանգվածի հասնելու նպատակով:

Հավելյալություն

- ԻՆԵՎՈԲԱՆԿԸ և նրա հաճախորդները կօգտվեն տեխնիկական աջակցության և Կանաչ տեխնոլոգիաների սելեկտորի միջոցներից՝ ավելի բարձր ստանդարտների հասնելու նպատակով:
- ԻՆԵՎՈԲԱՆԿԸ կօգտագործի ՎԶԵԲ-ի փորձագիտությունը՝ բարելավելու կանաչ տեխնոլոգիաների ներդրման համար GCF-GEFF տարածաշրջանային ծրագրի շրջանակներում տրամադրվող ֆինանսավորման հասանելիությունը հավասարապես կանանց և տղամարդկանց համար և, ի վերջո՝ օգնելու կին և տղամարդ էնթալարկառուներին ամրապնդել դիմացկունությունը փոփոխվող կլիմայի պայմաններում:

Ընկերության կոնտակտային տվյալները

Հայկ Ոսկանյան

Hayk.Voskanyan@inecobank.am

<https://www.inecobank.am>

Անցումային շրջանի ընկալումը

Այստեղ կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎՋԵԲ-ի հետ կապված (գնումների և շահնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ. հասցե՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում իրականացվող ծրագրերի համար տե՛ս [ՎՋԵԲ-ի Գնումներ](#).

Հեռ.: +44 20 7338 6794

Էլ. հասցե՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Հասուկ հարցումներ կարող եք անել՝ օգտագործելով [ՎՋԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՍՔ)

ԲՍՔ-ն և դրա հետ կապված՝ Կատարողականի նկատմամբ Պահանջները (ԿՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՋԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանելու «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացումը»: ԲՍՔ-ն և ԿՊ-ները ընդգրկում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դյուրացնելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական հարցերի կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՋԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների վերաբերյալ կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանք են դրանց:

Այս կապակցությամբ ՎՋԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ ներկայացված են [ԲՍՔ](#)-ում:

Բարելարություն և համապատասխանություն

ՎՋԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարելարության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարելարության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարելարության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործառքների բարելարության ապահովման

ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՁԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են խարդախության կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Ձեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության երկրների ցանկացած լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է բարեխղճորեն վարվել:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎՁԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություններ կան ՎՁԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու վերաբեյալ հատուկ հարցումները կարող եք ներկայացնել՝ օգտագործելով [ՎՁԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ՄՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ապեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎՁԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ՄՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ՄՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ապեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր [Բնապահպանական և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականությունների և վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը՝ տեղեկանալու, թե ինչպես կարելի է Դիմում ներկայացնել՝ լրացնելով [առցանց գաղտնի ձևաթուղթը](#), [էլ-փոստով](#), [փոստով կամ հեռախոսով](#): ԾՀԱՄ-ը պատրաստ է քննարկել ձեր մտահոգությունները և պատասխանել ցանկացած հարցերի, որոնք դուք կարող եք ունենալ Դիմումի ներկայացման կամ վարման վերաբերյալ, և այս գործընթացներն իրականացնելիս ԾՀԱՄ-ը հետևում է [Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությանը](#) և [Ուղեցույցին](#): Ըստ պահանջի, դիմումատուների ինքնությունը կարող է գաղտնի պահվել: